

ՆՈՐԻՆ ՎՆՀԵՓԸՌՈՒԹԻՒՆ ԵՄՅՐԸ-
ԳՈՅՆ ՊԸՏՐԻԸՐԻ ԿԸԹՈՒՂԻԿՈՍՆ ամե-
նայն Հայոց յայտնէ զգոհունակութիւն այնոցիկ
եկեղեցական և աշխարհական անձանց, որք ի
ցոյց որդիական անկեղծ զգացմանց սրտից իւր-
եանց՝ փութացեալ էին շնորհաւորել զՏօն վեց-
երորդ տարեդարձի () ծման Իւրոյ և Լնուանա-
կոչութեանն, օրհնէ գամենեսին Իւրով Հայրա-
պետական օրհնութեամբ, մաղթելով ի Տեառ-
նէ վասն ամենեցուն զբարօրութիւն կենաց ըստ
հոգւոյ և ըստ մարմնոյ:



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ ԺԲ. — ԵՐԶԱՆ ԻԲ. 1890

ՏԱՐԻ ԻԳ. ԴԵԿՏԵՄ. 1.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԿԵՂԾԱԽՈՐԻ ԿԵԱՆՔԸ.

Որդեակներս՝ չէ թէ խօսքով ու լեզուով սիրենք, այլ գործով ու ճշմարտութիւնով (Ա. Յովհ. գ. 18):

Յոյց տուր քեզ այնպէս, ինչպէս որ կաս. աւելի լաւ և աւելի վատ երևել ուրիշների աչքին պէտք չէ, ինչու որ կեղծաւորութեան բանեցրած ամեն խորամանկութիւնն ու հնարքները միշտ մատնուժ են իրան աշխարհին: Եւ եթէ աշխարհիս մարդիկը կոյր էլ լինէին,

երկնքումը կայ Մէկն, որ դատում է մեզ այնպէս, ինչպէս որ կանք,
ոչ թէ միայն այնպէս, ինչպէս որ երևում ենք:

Այն, ինչպէս քիչ կարելի է հաւատալ մարդոց, կամ նրանց վրայ
վստահութիւն ունենալ: Ինչպէս շատ ու շատ անգամ խաբում են
մեզ այնպիսի մարդիկ, որոնց խօսքին՝ կարծում էինք թէ՝ պէտք է
բոլորովին հաւատանք և ապահով լինինք ամեն կերպով, առանց որ
և իցէ կասկած տանելու: Որտեղ որ հաստատ յոյս ունէինք՝ սրտանց
բարութիւն գտնելու, գտանք սառնասիրտ քաղաքավարութիւն մի-
այն. ումնից որ բարեկամութիւն տեսնելու ակնկալութիւն ունէինք,
նրանից տեսանք անձնաշահութիւն միայն. ումնից որ կարծում
էինք՝ թէ՝ նրա սէրը կվայելենք, դառը փորձով հասկացանք, որ մեր
աչքին լաւ մարդ երևել է ուզեցել միայն՝ և իւր ունայնասիրու-
թիւնը ձեռքից բաց չթողնել: — Այն, ճշմարտութիւնն ու անկեղ-
ծութիւնը մի՞թէ հալածականների նման փախստական են եղել
կամ աշխարհիս երեսից վերացել: Մահկանացու մարդոց մի մեծ
մասն ո՛րչափ փչացած պիտի լինի, որ սիրտ չի անում իւր իսկական
կերպարանքովը մէջ տեղ դուրս գալ՝ և ոչ թէ կեղծադէմ՝ դիմակա-
ւորուածի նման:

Այս գանգատը շատ անգամ անում են մարդիկ, և շատ անգամ
էլ իրաւունք ունին անելու: Սրանիցն է որ շատերը չեն հաւատում
մարդոց: Այսպէսով սովորում են ամենի վրայ ամենավատ կարծիք
ունենալ: Մարդս այլ ևս չի հաւատում առաքինութեան, և կորց-
նելով իւր հաւատն, որ պիտի ունենար այդպիսի մի բարի և գովելի
վարքի ու գործի վրայ, որպիսի է առաքինութիւնը, կորցնում է
միանգամայն երկրաւոր բաղդաւորութեան ամենագեղեցիկ մասը:
Պատճառ որ շատ թշուառ վիճակ է, իրան շրջապատուած տեսնել
այնպիսի մարդկանցից, որոնց սրտում բարութիւնը հանգել է՝ վա-
ռուած պրծած մի ճրագի լուսի նման, և որոնք որ ոչ մի ժամանակ
իրանց իսկական անձը չեն ցոյց տալի մեզ, այլ հնարագիտութեամբ
ձեւանալ միայն գիտեն մեր առաջն այնպէս, ինչպէս որ ուզում են:

Իսկ դու էլ, որ այդպէս գանգատում ես, ինքդ քեզ քննի՛ր և

իմացիր թէ՛ արդեօք դու էլ քո կեանքումդ շատ ու շատ կերպով նոյնպիսի գանգատների առիթ ու տեղիք տուած չե՞ս արդէն, որ այժմ դժգոհ սրտով խօսում ես ուրիշների վրայ: Դու էլ ամեն մի մարդու առաջ այնպէս ճշմարիտ և ուղիղ եղե՛լ ես ու ե՞ս, որ ուրիշներից պահանջում ես՝ որ քեզ հետ սուտ ու կեղծ բարեկամ չլինին: Մի այնպիսի պակասութեանդ համար, որ շատ կուզենայիր ոչ որ չիմանայ, իսկի նեղութիւն քաշե՛լ ես, որ էլ այն մարդը չլինիս, այլ իսկապէս փոխուած ու լաւացած քեզ ցոյց տաս ամեն մարդու առաջ: Այս կամ այն նպատակիդ հասնելու համար միթէ չի պատահել քեզ, որ գեղեցիկ խօսքեր ես շուայլել, ու խօսածների թէև շատ լաւ, բայց մտքինդ ու սրտինդ չեն եղել: Խնքդ է՛ ուրիշներից ոչ պակաս՝ այս կերպով արդէն չե՞ս խաբել սրան՝ նրան, որ քեզ հաւատալով, վերջապէս տեսել են, որ խաբուել են:

Ձեանալու մեծ չարիքն առաջ է եկել մեր մէջ նորանից, որ արդէն շատ տեղ երեխեքքին սորվեցրած են՝ խելոքութիւնն առաքինու-թիւնից բարձր իմանալու: Այսպիսով այս՝ այն մարդն աւելի խորամանկ ու վարպետ է դառնում ու լինում, քան առաքինի, և վերջապէս՝ իւր շատ վարժուած ու կիրթ խելքովը գտնում է միջոցներ, որ օգնում են իրան իւր պախարակելի ցանկութիւնները պարկեշտութեան և օրինաւորութեան երևոյթի հետ կապելու, միացնելու:

Թէև մահկանացու մարդս միշտ մեծ յարգանքով է վերաբերուել դէպի առաքինութիւնը — մինչև անգամ շատ մեծ չարագործն էլ դեռ ևս պատկառանքով է մտիկ տալիս առաքինութեան վերայ — բայց սիրտ չեն անում, առանց ծածկելու, իրանք իրանց այն մարդը ճանաչեն ու խոստովանեն, ինչ մարդ որ են իսկապէս: Նրանք փաթաթում, ծածկում են խոնարհութեան վերարկուի մէջ, որ աւելի ապահով կերպով թաղցնեն իրանց ամբարհաւած պատուամոլութիւնը: Նրանք անմեղութեան կերպարանք են ցոյց տալի մեզ, բայց գրկում են անմեղութեան թշնամուն, այսինքն է՝ անառակութիւնը: Նրանք լաց ու կոծ են անում աշխարհիս մարդոց մեղաւոր լինելու վրայ. բայց իրենց փողն անխիղճ վաշխառուի պէս՝ մեծ մեծ շահերով են տալի՝ փողի պակասութիւն ու կարօտութիւն ունեցողներին, կամ թէ իրենց ունեցած հարստութիւնն՝ ուրիշ ծածուկ

մեղքեր գործելու վրայ են փչացնում: Նրանք դառնում են կեղծաւոր, երկու երեսանի մարդիկ, բռած գերեզմաններ, ինչպէս որ վսեմ կերպով մարդ ճանաչող աստուածայինն Յիսուս Նրանց անուն է տալի:

Շատ մարդիկ ինչո՞ւ Համար են այդպէս կամաւ վարժւում կեղծ կերպարանք ու երեւոյթ ունենալու արհեստի մէջ: — Խելոքութիւնից: Բայց ի՞նչ խելօքութիւն է այդ, Հոգւոյ բիծերն՝ ոչնչացնելու տեղ՝ թագցնենք, որ դրսից չերևին, կամ ամբիժ և անարատ կարծուինք. մարմնի թալախոտ խոցերը՝ բժշկելու տեղ՝ ծածկենք՝ և աշխատենք, որ աչքի ամենեւին չընկնին: Ի՞նչ խելօքութիւն է կամ ի՞նչ խելք է այնքան վատ մարդ լինելն, որ առանց դող գալու վրան, իրան չի կարող այնպէս ցոյց տալ, ինչպէս և ինչ որ իսկապէս է, և ստիպուած է իւր բոլոր կեանքի մէջ և՛ մինչև իւր գերեզման մըտնելն է՝ ուրիշ մարդ երևելու, քան թէ է իսկապէս: — Ի՞նչ խրդճալի զուարճութիւն է գտնում, կամ ի՞նչ կարեկցելի վայելուցութիւն է քաշած լինում կեղծաւոր մարդն՝ իւր կատարած այդ թշուառ դերում: Նրա միակ յաղթանակն, որ տանում է, մի քանի ամիս՝ կամ մի քանի տարի միամիտ մարդոց խաբել կարողանալն է: Հարցնում եմ, միթէ կարծի, որ իւր Համար Հոգսեր ծախու առնի մարդս, երկար ժամերով իւր միտքը չարչարի, գլուխ կոտրի Հնարքներ գտնելու՝ իբր թէ անհոգ և ապահով ապրելու Համար, և միանգամայն ինքն իրան գրեթէ միշտ վտանգի մէջ դնի, որ իւր մտքիցն ամենեւին անց չկացրած միջոցին, իւր դիմակը ցած ընկնի երեսիցը, ճանաչուի իւր կեղծաւոր, խարդախ մարդ լինելն՝ ու խայտառակուի: Այն ժամանակ ո՞ւր կմնայ խաբուածների վրայ իւր տարած յաղթանակն: Արհամարհանքով ու զգուանքով երես շուրկտան իրանից. իսկ իրան կմնայ իւր խղճմտանքի խայթն, որ փուշի պէս կծակի իւր սիրտն:

Ի՞նչ է կեղծաւորի, կամ երկու երեսանի մարդու կեանքն, եթէ ոչ՝ մինչև իւր Հոգին փչելն է՝ ինքն իւր Հետ Հակասութեան մէջ լինելն: Նա մի դերասան է, որ մարդոց առաջ երբէք իւր իսկական կերպարանքովը դուրս չի գալիս, այլ՝ իւր վրայ առած մի դերումն այն է ներկայացնում, ինչոր ինքը չէ. նա մի կեղծ դրամ է, որ ըստ

ինքեան մի արժէք չունի, և որ իւր արտաքին երեւոյթովն, այսինքն է՝ պատկերովն ու գրով՝ անփորձ մարդուն է խաբոււմ: Այսպիսի հրէշն, ինքն իւր վրայ լուրջ կերպով մտածած ժամերում, ամենաանարգ մարդն է տեսնում իրան, ինչու որ ինքն իրան ամեն մարդկանցից աւելի լաւ է ճանաչում:

Միայն թեթեամտութիւնից ու սնապարծութիւնից յառաջացած աներեսութիւնն է, որ իրան պահում է, մխիթարում ու սիրտ տալիս՝ իւր կեղծ, մարդ խաբող դերը խաղալու: Քիչ կպատահի, որ նա մարդոց վրայ դատողութիւն անի, նրանց սիրտն իւր աչքի առաջ ունենալով: Ի՞նչ, նա այդպէս չէ մտածում, այդպէս էլ չի անում, այլ մտիկ է տալի միայն նրանց սուր աչքին, որ բան շուտ է տեսնում, նման ձեռնածուին, որ միշտ սաստիկ վախ ունի և զգոյշ է, որ չկորցնի իւր պատիւն՝ կամ բազմութեան իւր վրայ ունեցած համարումն, և կորցնում է, երբ որ մէկն այնքան խորամանկ է լինում, որ իւր կախարդանքը կամ աչքակապութիւնը հասկանում է՝ ու բացատրել կարողանում: Ուրեմն շատերի համար այնուհետեւ այլ ևս մի հանելուկի նման չի մնում: Սորա համար է, որ նա աշխարհիս մարդոց դէմ՝ մի թշնամու նման՝ թշնամական դիրք է բռնում միշտ, աչքն ու ականջը միշտ սուր պահելով, որ ինքն իրան չմատնի, իրան չճանաչեն թէ՛ ի՞նչ մարդ է, որ իւր խորամանկութիւնը կարողանայ շարունակ բանեցնել: Իւր բոլոր կեանքը մի անդադար ջանք ու աշխատութիւն է իւր ոչնչութեան համար: Առանց շողոքորթութիւնների էլ, կամ կեղծ հնազանդութեան, խոնարհութեան, կամակատարութեան, պատուապահութեան, տեսակ տեսակ ստութիւնների ու խաբեբայութիւնների — մի խօսքով, ի՞նչ անուն էլ որ ունենայ իւր երեւակայութեան գործած ուստայնը, — նա կարող էր բաղդաւոր մարդ լինել՝ և իսկական ներքին արժանաւորութիւնով վերջապէս իւր նպատակին հասած լինել: Բայց նա իւր կեանքի համար ուրիշ ճանապարհ է գտել և ընտրել. նրան այնպէս է թուել, որ՝ աւելի հեշտ ու հանգիստ կերպով ապրելու ճանապարհը՝ շատ հոգս անելն է, սրտով անհանգիստ չլինելը, տխուր, տրտում, դժգոհ օրեր անց կացնելն, ամօթ քաշելն, ինքն իրան ամենեւին չհաւանելն ու արհամարհելն: Ափսոս, հազար ափսոս,

որ կեղծաւոր ու խարդախ մարդը՝ բոլորովին զուր տեղը՝ բերանով չպատմուելու և միանգամայն անօգուտ նեղութիւններ է քաշում նրա համար միայն, որ անպատիժ կարողանայ վառ մարդ լինել: Այդ ողորմելի, քո քաշած չարչարանքիդ կէսն, որ լաւ ճանապարհի համար լինէր, դու ազնիւ, բարի անուն, պատիւ ունեցող ու բազմապիսի կարող էիր լինել: Ո՛ր է քո խելքդ, որ այնչափ հաճելի բան է քեզ համար: Գո՛ւ այժմ ունեցած խելքիդ՝ ամենամեծ անխելքութեան անուն տալ արժանի չէ՞ արդեօք:

Որքան էլ որ մարդս աշխատի, շատ խորամանկութիւն բանեցնելով, իւր վատ մտքերն ու դիտաւորութիւններն անմեղութեան, անխարդախութեան ու բարութեան դիմակի տակ ծածկելու, թազցնելու, էլի չի կարող այնպէս անել, որ այս՝ այն տեղ իւր երկու լեզու ունենալն, իւր խարդախութիւնն ու խաբեբայութիւնը չերևի, ինքն էլ չշփոթուի: Եւ՝ այլայլուելուցը՝ հէնց մի ըստ էլ իւր քաշած երկիւղն ու ամօթը միթէ կարծի այնքան շատ օրեր իւր քաշածներին, խելք մաշելով հնաբներ գտնելուն, որ իւր մտքովը դրած նպատակին յաջող կերպով հասնել կարողանայ՝ առանց սխալ անելու, և՛ ինչոր ամենավատն է՝ խայտառակուելու: Նրա ձեռքիցը չի գալ բանն այնպէս բռնելու, որ այսօր՝ կամ էգուց, ինքն էլ չի մացած, երկիւղն իւր սիրտն չըմտնի, որ բանը բացուեց, իւր խորամանկութիւնն ու բանեցրած հնաբները ու խաբեբայութիւնն հասկացան: Ինչու որ ինքն իրանից չի կարող ծածկել, որ իւր ձեռքովը չէ իրանից հեռացնել իւր գլխին գալիքն, որ մենք պատահմունք ենք ասում: Նա գիտէ, որ գիշերն ոչ մի գաղտնիք չի ծածկում, որ անյայտ մնար, այլ իւր մթութեան մէջ՝ իբրեւ ապահով ժամանակ՝ մարդուս արած չարագործութիւնը միշտ օրուան լուսի առաջն է հանում և չար գործի տիրոջը մատնում: Նա գիտէ, որ շատ անգամ մի երեխայի ձեռքը կտորում է շատ խորը պահած, թազցրած դադմիքի կնիքն, որ ոչ մի բարակ խելքի տէր մարդ չէր կարող հասկանալ կամ կարծել, որ մի երեխայից կ'այտնուի: Ի՞նչ էք ասում, ձեզ եմ հարցնում, այդ անհանգստութիւնը մի բազմաւորութիւն է, այդ այլայլութիւնը, շատ հոգս անելն երջանկութիւն է, որին որ մեր կեանքի մի մեծ մասը ի զուր զոհ բերէինք:

Դու ուզում ես ազնիւ ու բարի ելնէլ, բայց ինչո՞ւ չես ուզում ազնիւ ու բարի լինել: Դու զգում ես, որ մարդս չի կարող երկու տիրոջ ծառայել, ուզում եմ ասել՝ ծառայել միւսին ժամանակ թէ՛ երկնքին և թէ՛ դժոխքին. ինչո՞ւ համար՝ առանց դող գալու վրադ՝ հանգիստ և ուրախ սրտով չես ընտրում քեզ համար աւելի լաւ մասըն ու բաժինը:

Կեղծաւորութեան ու խարդախութեան բերած պտուղն այնպիսի օրեր քաշել, այնպիսի կեանք անցկացնելն է, որ մարդուս սիրտը միշտ տանջւում է ու տանջւում, և ինչ որ այդ կերպով է ձեռք բերուած, ուղիղ ճանապարհով աշխատած մի բան չէ՞ հօ, այլ կողոպտած: Բայց ինչոր ամենատխրալին է կեղծաւոր ու խարդախ մարդու համար՝ իւր այն անբաղդութիւնն է, որ նա ոչ մի ժամանակ չի կարող վայելել աշխարհիս այն հազուագիւտ բարիքն, որ անկեղծ բարեկամ ունենալու բաղդաւորութիւնն է, որ մասն ու բաժինն է ճշմարիտ և անխարդախ մարդու միայն, որին որ հաւատալ կարող ենք. այդ բարեբաղդութիւնիցն ընդ միշտ զրկուած է նա, ինչու որ սրտանց բարեկամ ունենալ կարող է միայն մաքուր սիրտ և ուղիղ հոգի ունեցողը:

Ծուռ մտքի ու սրտի տէրն, ուզում եմ ասել, կեղծաւոր խաբեբայ մարդը կարող է իւր խարդախութեան արհեստի ու ճարտարութեան մէջ շատ էլ առաջ գնացած լինել, լաւ վարպետ դարձած լինել, բայց նրա մէջ կայ մի բան, որ դիմակ չի ընդունում՝ ու դիմակաւորութիւն չէ կարող, որովհետեւ կեղծ, խաբեբայ ու խարդախ բան չի սիրում, այլ ուղիղն ու ճշմարիտն. այդ՝ նրա արթուն լուրջ խղճմտանքն է: Ինչքան ուզում է՝ ժպիտն իւր երեսիցն անպակաս անի կեղծաւորն ու խաբեբան, բայց իւր աչքերի մէջն երևում է մի կասկածաւոր բան որ իւր նայուածքի կեղծ լինելն է ցոյց տալի. ինչքան ուզում է, երդումն ուտի, իւր սուտն ողորդի տեղ քշելու համար, խղճմտանքն աննշմարելի կերպով իւր ձայնը մի աններդաշնակ, մի վատ կերպով է հանել տալիս, և անբնական կերպով իւր հանած այդ ձայնիցն, այսպէս ասեմ, խարդախութեան հոտը գալիս է: Եթէ որ ոչ մի մարդ էլ քեզ չմատնէր ու քո կեղծ վարմունքդ դուրս չհանէր, դու ինքդ քո մատնիչդ կդառնաս, թէև ոչ մաքունդ:

կայ, ոչ էլ սիրտդ կուգենար, որ ինքդ քեզ վատ կողմից ճանաչեցնէիր ու ինքդ քեզ խայտառակէիր:

Սրանիցն է, որ դու քաղցր կերպարանք ես շինում ու քաղցր էլ խօսում, բայց քո խարդախ երեսիդ ու աչքիդ մտիկ տուողներն ու վարպետութիւնով ասած խօսքերդ լսողները կասկածանքի են գնում ու հաւատալ դժուարանում, սրանիցն է, որ շատ մարդիկ քեզանից հեռու են պահում իրանց՝ ու հեռուիցն են քեզ նկատում: Եւ առաջին ու ամենափոքր կասկածաւոր գործդ, որոյ մէջ դու բռնում ես, այնքան մեծ բանի տեղ է անց կենում, որ բաւական է լինում քո ծանօթներիդ ու հարեւաններիդ քեզ վրայ ունեցած հաւատարմութիւնն երկար ժամանակ, կարելի է հենց ընդ միշտ կորցնելու:

Այս ասածներս նրանց է վերաբերում, որոնք որ փոքր ու միջակ մարդիկ են կամ ընդհանրապէս կախումն ունեցողներ, այդպիսիքն հէշտ ու հանգիստ ապրելու և յառաջանալու համար՝ մշտական խիստ վարժութիւն ու արհեստ են շինել իրանց համար այդ տեսակ վարմունքն, որոյ մէջ շատ հմուտներն էլ են պատահում. բայց բարձր ու շատ փափուկ դիրք ունեցողներն անարժան են համարում իրանց համար նրանց ճանապարհովը գնալ, որ սովորական ու հասարակ մի բան է, այլ իրանց կեղծ վարմունքն ու խարդախութիւնը, լուրջ կերպարանք ընդունելով են ծածկում և՛ ծանրութեամբ արտասանած իրանց իբր ճշմարիտ խօսքերի տակ, մինչդեռ իրանց միտքն ու սիրտը բոլորովին ուրիշ է:

Տես քո մեղքն է, որ դու քո կեանքդ միակ ես անցկացնում աշխարհումս, քո երկու երեսանիութիւնովդ, և ոչ մի բարի սիրտ քո սրտիդ չի կպչում: Դու ապրում ես առանց բարեկամ ունենալու: Հարստութիւնդ շողգորթներ կարող է գլխիդ հաւաքել, որ քեզ խաբեն, ինչպէս որ դու ուրիշներին այժմս էլ խաբում ես. ունեցած ուսումդ ու ճարտարութիւններդ կարող են քեզ հաւանողներ ու պաշտպաններ գտնել. պատուաւոր պաշտօնները կարող են քեզ արտաքին արժանաւորութիւններ ունենալու հասցնել, մինչդեռ սրտով քեզ յարգող չլինել — բայց քո քաղաքակիցներիդ սրտանց և անկեղծ սէրն ու սրտով քո սրտիդ հետ կապուելն այլ ևս յոյս չու-

նենան: Ինքդ ես քեզ դատապարտել առանց մի բարեկամ ունենալու ապրել աշխարհումս:

Ո՞վ պիտի սիրէր քեզ ու պատուէր, այ կեղծաւոր փարիսեցի, երբ որ դու յանկարծ քո բոլոր անպիտանութիւնովդ մարդոց մէջ միտնէիր՝ և այն աչքով մտիկ տային քո վրայ, որ դու անարդար ճանապարհով ուրիշի բարիքը քեզ ես սեպհականել. կրքիցդ կուրացած, նախանձոտութիւնովդ ուրիշների փառքը նսեմացնող ես, և ոլոր մոլոր ճանապարհով աշխարհի Հաւանութիւնը ստանալու ետեւից ես ընկել, ծածուկ անպատկան բաներ ես անում. մինչեւ քեզ մի մաքուր և անբիծ վարք ու բարքի տէր մարդու տեղ էին դնում. որ դու ստոր խորամանկութիւնովդ քեզ նման մարդուն փոս ես փորում, կորցնելու Համար, չմտածելով որ յետ ու առաջ դու ինքդ պիտի ընկնես մէջն. որ դու բազմութեան մէջ ջերմեռանդ աղօթք ես անում, լաւութիւն անել, ողորմած լինել ես քարոզում, բայց որբերին և այրիներին նեղել ոչ ամաչում ես և ոչ խղճահարում. որ դու սիրում ես քեզ ու քո փառքդ ցոյց տալ, պարծանքի Համար Հոգի տալով, մինչեւ ինքդ քեզ՝ գուցէ քնտանեացդ էլ Հետդ՝ քո սնապարծութիւնովդ աղքատութեան մէջ ես քցում:

Քեզ ո՞վ կարող էր սիրել կամ քեզպէս մարդուն Հաւատալ:

Մարդկային կեանքի մէջ սովորական մի բանն է, որ եթէ մի մարդ, Հէնց մի անգամ էլ լինի, կեղծաւոր ու խարդախ ճանաչուեց, իրան միշտ մի կերպ ցոյց չտալով, այլ այսպէս ու այնպէս երևելով, աւելի վատ է Համարում, քան թէ իսկապէս ինքն է: Միշտ երկպատիկ պատիժ է ստանում նա: Նրան չեն Հաւատում այն ժամանակ էլ, երբ որ Հաւատալու բան է ասում՝ կամ անում. նոյն իսկ այն սիրելու արժանի իւր յատկութիւններն էլ, որ ունի, իւր իսկական և անխարդախ յատկութիւնները չեն Համարում, այլ Համոզուած են լինում, որ նա ձեւացնում է ինչ որ չէ ու չկայ, ինչու որ չեն իմանում թէ՛ մինչև որ աստիճան է Հասցրել ուրիշներին շլացնելու և խաբելու իւր ճարտարութիւնը: Խարդախ ու խաբեբայ են կարծում նորան նաև այնտեղ. որ տեղ և որ բանի մէջ որ նա իւր մտքիցն անգամ չի անկացրել իւր ասածի կամ արածի մէջ սուտ խառնել, խարդախութիւն անել. բայց մի անգամ որ մտքներումը

դրել են, որ նա ուղիղ բան ոչ կասի, ոչ կանի, իրանց այսպիսի հաստատ համոզմամբն իւր արած բարի գործերին էլ չեն հաւատում, կասկածելով թէ՛ տակը մի ծուռ միտք, մի անմաքուր նպատակ պիտի ունեցած լինի:

Այսպէս և այս է կեղծաւոր, խարդախ, երկու երեսանի մարդու վիճակն, այսպէս և այս է նրա կեանքը: Նա յոյս ունի, որ իւր խելքով թիւնովն ամեն բանի կյաղթի. բայց աշխարհս ու հանգամանքներն յիրաւի նրանից աւելի զօրաւոր են. վերջը վերջը բանից դուրս է գալիս, որ ինքն է ամենից աւելի խաբուածն, և իւր վարմունքի դառն հետեանքներից նոր է հասկանում, որ իւր արածների մէջ Աստուած միտքը չէ բերել:

Անխարդախ ու մաքուր սրտի տէր եղի՛ր: Ծուռ բան մի՛ բռնիլ, միշտ ուղիղ ճանապարհով գնա՛ ամեն գործիդ մէջ, և ոչ մի մարդուց մի վախենար: Եղի՛ր այն, ինչ որ երեւել ես ուզում, բայց երեւի՛ր ոչ աւելի լաւ, քան թէ իսկապէս դու կաս և ես: Մտքովդ մարդասէր եղի՛ր, որ քաղցր երեսիցդ էլ երեւայ, սրտովդ՝ անկեղծ և ուղիղ, որ բերնիցդ դուրս եկած խօսքերիցդ յայտնուի մաքուր սիրտդ. հոգւովդ անմեղ և անարատ՝ որ շարժմունքիցդ էլ նկատուի: Կեանքի իսկական, անկասկած և իրօք երջանկացնող խելքով թիւնն այս է, որ քեզ երբէք չի թողնիլ պատուիցդ ընկնելու կամ անուղկոտրելու:

Գիտեմ, ո՛վ իմ Աստուած, որ Դու իմ սիրտս քննում ես, փորձելով ինձ, գիտեմ, որ ուղիղ հոգին է Քեզ հաճոյս: Այսպէս էր աղօթում երբեմն Դաւիթ մարգարէն, այսպէս պէտք է աղօթք անեմ ես էլ, և միշտ միտքս բերեմ ամենագէտ իմ Ստեղծողին, Որոյ առաջ մարդս իւր բոլոր վարպետութիւնովն ու խելքով թիւնով խայտառակում է և աճօթով մնում: Գիտեմ, իմ երկնաւոր Հայրս, որ Դու մեր սրտերը քննում ես — որ Դու մեր սրտերը դատում ես այն ժամանակ էլ, որ մարդիկ ոչ քննել և ոչ դատել են կարող: Դու ծածկագէտ, որին որ ոչ ոք խաբել չէ կարող, քննել ես ու ճանաչում ես սրտիս ամենածածուկ ծալքերն էլ: — Դու ամեն մի մարդուց անհամեմատ կերպով աւելի լաւ գիտես թէ՛ ինչպէս շուտ շուտ եմ Քո առաջդ սխալներ անում, ու պակասաւոր, յանցաւոր

գտնուում: Բայց սուրբ մտքով Քեզ վրայ մտածելով, և միշտ Քեզ իմ աչքիս առաջն ունենալով, ինքս ինձ Հետ խիստ կերպով վարուող եմ դառնում՝ մի անաչառ և արդար դատաւորի նման՝ և գրեթէ Հսկայական ոյժ եմ ստանում՝ իմ մէջս բնակուած շատ ու շատ տեղ անյաղթ չարին յաղթելու: Ես ինձ այնտեղ պէտք է Հասցնեմ, ո՞վ սրտագէտ Տէր, որ պարզ ու զուարթ երեսով մարդոց ու Քո առաջ դուրս գալ կարողանամ:

Գ. Ե. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՍՏՐԿՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԻՑ ԱՌԱՋ.

(շարունակութիւն)

Մի խօսքով անհնարին է թուել բոլոր ստրուկներին, որոնք նշանակած էին Հռովմայեցի Հարստի տանը ամենանշան պաշտօնների Համար: Հռովմի Ս. Սեբաստիանոսի եկեղեցու դրանը գտանուող մի յիշատակարանի արձանադրութեան մէջ յիշվում են 32 ստրուկներ, որոնք եկած են Հռովմ իբրեւ ուղեկիցներ իրանց ճանապարհորդող տիրոջ, որ Հռովմում վախճանում է և ինքն էլ ոչ այլ ոք է եղած, բայց եթէ մի Հարստացած ստրուկ: Երբեմն ճանապարհորդող Հարուստը տանում էր Հետը Հազարաւոր ստրուկներ, որոնց մէջ մինչև անգամ լինում էին երգեցիկների խմբեր: Կարելի է երեւակայել, թէ որպիսի աղմուկ և շարժողութիւն ընկնում էր Հարստի տանն, երբ մի բարձրաստիճան ոմն արժանի էր անում նրան իւր այցելութեան և որպիսի օրդու — բանակ Հետեւում էր կայսրներին: Երբ սկսուում էր խրախճանն ի պատիւ գալստեան բարձրաստիճան Հիւրի, Հարիւրաւոր գեղեցիկ մանկունք շրջապա-